



## 51. ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴ

Ավալ ժամանակին ըլնում ա, շիլնում մի թագավոր: Էս թագավորը իրա ամարաթի աղաքին մի լավ գյուլի բաղ ա ունենում՝ միշին մի Անմահական վարդի ծառ: Համա խեղճ թագավորը ի'նչ անում ա, չի անում, ի'նչ կատեպան բռնում ա, ի'նչքամ մուղաթ ենկենում, շիլնում՝ հենց գալիս ա բացվելու վախտերքը, խարը գալիս ա էդ վարդն ուսում, էթում, չի թողում, որ բացվի: Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ թագավորը մնում ա հասրաթ էդ վարդի ֆոտին: Օրեն մի օրը գալիս ա մի կատեպան:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— որ ինձ կատեպան բռնես, քու վարդին ընենց մուղաթ կկենամ, որ խարը չի ուտի: Հենց բացվեց թե չէ, — ասում ա, — կրաղեմ, կրերեմ, կտամ քեզ:

— Տղա՛, — ասում ա թագավորը, — աշխարքումն էլ կատեպան չի մնացե՛ էկել ա, ի'նչ ա շաթե, որ զու ի'նչ շաթես:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա, — ես կարամ. չկարացի՝ արինս քեզ հալալ ա:

— Լա՛վ, զո՞ւ զիտաս, — ասում ա թագավորը, — կարամ՝ զնամուղաթ կաց: — Բերում ա, սրան բռնում իրան կատեպան:

Գարունքը գալիս ա թե չէ, էս կատեպանն ա՝ նետուանեղը վերա ունում, էթում Անմահական վարդի ծառի տակին գշեր-ցերեկ դա-

Թագուց քաշում: Կենում ա մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, հենց էն ա պտի վարդը բացվեր՝ մի վախտ տղի քունը տանում ա: Էն դհիցը խարը գալիս ա վարդն ուտում, թողում էթում: Կատեպանը ալքը բաց ա անում, տենում ո՞նչ վարդ կա, ո՞նչ զադ:

Գալիս ա թագավորին խարար տալի.— Թագա'վորն ապրած կենա, — ասում ա, — սաղ շաբաթ գշեր-ցերեկ դարավուկ քաշեցի, հենց էկավ բացվելու վախտերքը, սատանական քունս տարավ. մի վախտ աշք բաց արի, տեհա՛ խարն էկել ա կերե, գնացե: Թագա'վորն ապրած կենա, էս հետ բաշխա՛, գյալաջաղը ո՞նց ըլնի՛ ես խարի հախիցը կգամ:

— Բա՛ն չկա, — ասում ա թագավորը, — կերել ա՛ կերե, նրա՛ն էլ չի մնա:

Էս մի տարին ըսենց անց ա կենում, գալիս ա էն մի տարին: Դարունքը բացվում ա թե չէ, էս կատեպանը վեր ա կենում, էլի էթում վարդին մուղաթ կենում: Հենց գալիս ա բացվելու վախտերքը, տենում ա՛ խարն էլի էկավ, որ ուտի, ուզում ա նետուանեղով տա, էն դհիցը մի բլրուկ թռնում ա դալի, խարին կտցում, տանում:

Վարդը մնում ա սաղ-սալամաթ: Կատեպանը ուրախ-ուրախ քաղում ա, տանում տալի թագավորին:

— Թագա'վորն ապրած կենա, — ասում ա, — հետ վարդը քաշեցի, բերի: Էս հետ էլ խարն էկավ, որ ուտի, էն դհիցը մի բլրուկ թռավ, էկավ խարին կտցեց, տարավ:

— Բա՛ն չկա, — ասում ա թագավորը, — էն բլրուկին էլ չի մնա:

Էս տարին էլ ա ըսենց անց կենում: Գյալաջաղը իրա վախտին էս կատեպանը էլի էթում ա վարդին մուղաթ կենում, գշեր-ցերեկ ծառի տակին զարավուկ քաշում: Հենց գալիս ա բացվելու վախտերքը, տենում ա՛ էլի մի խար դուս էկավ, վրա պրծավ վարդին հենց էն ա սուզում էր՝ ուտի, էն դհիցը էլի էն բլրուկը վեր էկավ, որ խարին կտցի, տանի՛ որդիան որ էր, թիերի տակիցը մի վիշապ դուս էկավ, բըլքուին էլ, խարին էլ մի հանքի կուկ տվեց. վարդը մնաց էլ եղ իրա տեղը անարատ, կատեպանը ուրախանում ա, աշխարով մին ըլնում, վարդը քաղում ա, տանում տալի թագավորին:

— Թագա'վորն ապրած կենա, — ասում ա, — էս տարի էլ ամեն տարվա պես էլի մի խար էկավ, ուզեց վարդն ուտի, էն դհիցն էլի: Էն բլրուկը թռավ, վեր էկավ, հենց էն ա ուզում էր՝ խարին կտցի, տանի, ալրիալը թիերի տակիցը մի վիշապ դուս էկավ, վրա հասավ,

էրկսին էլ մի հանքի կուլ տվեց: Հրես սաղ-սալամաթ վարդը քա-  
ղեցի, բերի:

— Բա՛ն չկա,— ասեց թագավորը,— էղ վիշապին էլ չի մնա:

Էս մի տարին էլ ըստեց անց կացավ, գյալաջաղը էլի կատեպա-  
նը վե կացավ գնաց, որ վարդին մուղաթ կենա: Էկավ բացելու-  
վախտերը, տեհավ՝ էլի մի խար դուս էկավ, վրա հասավ, որ վարդն-  
ուտի: Էն դհիցը էլի մի բլրուկ թռավ, վեր էկավ, հենց էն ա ուղում  
էր՝ խարին կտցի, տանի, թիերի տակիցը էլի էն վիշապը դուս պըր-  
ծավ, վրա հասավ, էրկսին էլ մի հանքի կուլ տվեց: Կատեպանը որ  
տեհավ, էս հետ էլ շհամբերեց, քաշեց նետուանեղը, տալու բաշ-  
տա՞ն յա՞լա, վիշապը գլխի վրեն կունտկի տվեց, արենճենեխ ըն-  
կավ զետինը, սատկեց: Էն սհաթը վարդը քաղեց, տարավ տվեց թա-  
գավորին:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— էս տարի էլ խարն-  
էկավ, ուղեց՝ վարդին ուտի, բլրուկն էկավ, ուղեց՝ խարին ուտի, էլի-  
էն անխսաֆ վիշապը թիերի տակիցը դուս պրծավ, վրա հասավ, էր-  
կրսին էլ կուլ տվեց: Էս որ տեհա, ևս էլ քաշեցի նետուանեղս, տվի,  
վիշապին տեղն ու տեղը չորացրի:

— Դո՛ւ էլ լավ ես արե,— ասեց թագավորը,— համա քե՛զ էլ  
շի մնա:

Կատեպանը էս խոսքի վրեն մնում ա միտք անելոն, թե էս ի՞նչ  
րաս ա, թագավորը խի՞ պտի ասի. Փե՛զ էլ շի մնա: Միտք ա-  
անում, միտք ա անում, խելքը բան չի հասնում: Էթար թագավորին  
հարցներ՝ վախում էր, լըլնի՞ թե հերսոտի: ըստեց մնաց, ասեց.  
«Տենամ՝ սրա վերջն ինչ ա ընում»:

Թագավորի գյուլի բաղի միջին մարմարից շինած մի հավուզ  
կար, որգե թագավորը, իրա կնիկը վախտ-վախտ գալիս ին լեղա-  
նում: Օրեն մի օրը, կատեպանը նի էլավ էղ հավզի կշտի ծառը,  
վրեն չորուկ-մորուկ կար, ուղում էր կտրի: Բիրդան տեհավ՝ թագա-  
վորի կնիկը իրա ղարավաշներով էկավ, որ հավզի միջին լեղանա-  
նա էլ վախլությունիցը վե չէկավ ծառիցը, ասեց. «Կենամ, լեղանա,  
պրծնի, էթա՞ եննա», Թագավորի կնիկը շորերը հանեց, նի մտավ  
հավուզը, լեղացավ, պրծավ, դուս էկավ, շորերը հագավ, որ էթա-  
մի դաֆիլ գլուխը բանձրացրեց, տեհավ՝ կատեպանը ծառի վրեն:  
Էլ ձեն-ծպտուն շհանեց, թողաց էկավ ամարաթը, թագավորին մին-  
մին նազլ արեց:

— Բա՛ չե՞ս ասի, ըստ'նց, ըստ'նց բան. ես գնացել ի հավուզը, որ լեղանամ. լեղացա պրծա, շորերս հագա, ուզում ի էթա, մի դաֆիլ վիրկ մտիկ արի, տեհա՛ մեր կատեպանը ժառի վրեն. դու մի ասի, աղաքուց էկել ա նի էլե ծառը, որ տեսա՛ ոնց եմ լեղանում:

Թագավորը էս որ լսում ա, կատաղում, ասլան ա դառնում: էն սհաթը ձեն ա տալի. — Ճա՛նլաթ, ջա՛նլաթ, ջա՛նլաթ:

Էն սհաթը ջանլաթները գալիս են, թագավորին գլուխ տալի, ընդէ կանում:

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորն ապրած կենա, — ասում են:

— Կէթա՛ք, — ասում ա, — էս սհաթին կատեպանին կրերեք, իմ աղաթին բյալլա կանեք:

Ճանլաթներն էթում են, կատեպանին բերում թագավորի կուշարը: Դե՛ կատեպանը էս որ տեհավ, ալբիալը գլխի ընկավ, թե բանը ընշում ա:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասեց, — չի՛նի, ինձ թողաս՝ էրկու խոսք ասեմ, ենանա ի՛նչ ուզում ես՝ արա՛:

— Լա՛վ, — ասեց թագավորը, — ասա՛ տենամ՝ ի՞նչ ես ասում:

— Թագա՛վորը սաղ ըլնի, — ասեց կատեպանը, — մի՛տդ ա, որ ինձ կատեպան բռնեցիր. առաջի տարին էկա քեզ ասեցի, թե. «Խարը վարդին կերավ», որու ասեցիր. «Բա՛ն չկա, նրան էլ չի մնա», էա՛վ: էն մի տարին էլ զնացի վարդին մուզաթ կենալու, էկա ասեցի. «Մի բլրով էլ էկավ խարին կերավ», որու էլի ասեցիր. «Բա՛ն չկա, դրան էլ չի մնա», էա՛վ: Վրա իրեք տարին էլ որ էկա ասեցի. «Էս հետ էլ թիկերի տակիցը մի վիշապ դուս պրծավ, բլրուին կուտվեց», որու էլի ասեցիր. «Բա՛ն չկա, նրան էլ չի մնա», էա՛վ: Վրա շորս տարին, որ էկա ասեցի. «Վիշապին էլ ես տվի, սրպանեցիս», որու էս հետ ասեցիր. «Բա՛ն չկա, քե՛զ էլ չի մնա», Հմի, թագա՛վորն ապրած կենա, — ասեց, — դրուստ որ ընձ էլ չմնաց. քու խոսրը կամարվեց, որ ուզում ես նհախ տեղը իմ գլուխը թոցնիլ տա: Դե բաս ըտենց ա, թագա՛վորն ապրած կենա, հմի էլ ես եմ ասում, որ. «Քե՛զ էլ չի մնա»:

Թագավորը որ լսում ա կատեպանի խելոք ջուղարը, նրան բաշ-խում ա, էլ չի թողում, որ քյալլա անեն:

